



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կարենիս, 60009, Karenis.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 22(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համապատասխան, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի թիվ 8 նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիսի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիսի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին:
4. Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ -վաճառքի մրջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԵԱՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՐՍԵԼ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

5. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ

Համայնքի ղեկավար



ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կարենիս, 60009, Karenis.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՏԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11 հոդվածներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵԿՈՐԳ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՇԱՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՐՍԵԼ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

5. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ

Համայնքի ղեկավարի

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ





Հանրապետության համայնքի ավագանու  
2014թ. դեկտեմբերի 25-ի թիվ 23-Ն որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝  
*հիմնական օբյեկտների համար՝*

- 1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.
- 2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝  
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.  
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.  
գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.  
դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

- 3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ.
- 4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
  - 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.
  - 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «2.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
  - 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների բանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
  - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1875 դրամ.
  - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1875 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
  - 1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ 1 քառակուսի մետրի համար.
  - 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.



- 3) խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 40000 դրամ.
- 4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
- ա) հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ,
- բ) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
- 1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.
- 4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
- 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
- 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ բառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
- 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
- 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.
- 3) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.
- 4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 դրամ:
9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
- 1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ.
- 2) ոչ կենցաղային և խոշոր եգրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2500 դրամ:
5. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եգրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝



Լ. Խաչատրյան





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կարենիս, 60009, Karenis.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ  
ԴՐՈՒՅՔԱԶՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
16-րդ հոդվածի 1-ին մասի 26-կետով և 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, որոշման  
նախագծի բնութագրության արդյունքներով 5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիսի գյուղապետարանի  
աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային  
դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆՇԱՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՐՍԵԼ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԴԱՆ

5. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ







Հավելված

Կարենիսի համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 24-ի N24(1)

# ՀԱՄԱԻՔԱՑՈՒՑԱԿ

Կարենիսի գյուղապետարանի աշխատակազմ

աշխատակազմի թվաքանակը 14

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը        | Հաստիքի տեսակը          | Պաշտոնի ծածկագիր | Հաստիքի միավորներ | Պաշտոնային և ռոտացիայի | Հավելումը | Հավելվածարը | Աշխատավարձի չափը |
|-----|---------------------------|--------------------------|-------------------------|------------------|-------------------|------------------------|-----------|-------------|------------------|
| 1   | 2                         | 3                        | 4                       | 5                | 6                 | 7                      | 8         | 9           | 10               |
| 1   |                           | Համայնքի ղեկավար         | Քաղաքական               | -                | 1                 | 200,000                |           |             | 200,000          |
| 2   |                           | Համայնքի տնօրենի տեղակալ | Հայեցողական             | -                | 1                 | 70,000                 |           |             | 70,000           |
| 3   |                           | Աշխատակազմի քարտուղար    | Համայնքային ծառայության | 1.2-1            | 1                 | 150,000                |           |             | 150,000          |
| 4   |                           | Գլխավոր մասնագետ         | Համայնքային ծառայության | 2.3-1            | 1                 | 131,000                |           |             | 131,000          |
| 5   |                           | Առաջատար մասնագետ        | Համայնքային ծառայության | 3.1-1            | 1                 | 130,000                |           |             | 130,000          |
| 6   |                           | 1-ին կարգի մասնագետ      | Համայնքային ծառայության | 3.2-1            | 1                 | 80,000                 |           |             | 80,000           |
| 7   | Գյուղապետարանի աշխատակազմ | 1-ին կարգի մասնագետ      | Համայնքային ծառայության | 3.2-1            | 1                 | 80,000                 |           |             | 80,000           |
| 8   |                           | 2-րդ կարգի մասնագետ      | Համայնքային ծառայության | 3.3-1            | 1                 | 59,000                 |           |             | 59,000           |
| 9   |                           | Գործավար                 | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 80,000                 |           |             | 80,000           |
| 10  |                           | Գյուղատնտեսական          | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 59,523                 |           |             | 59,523           |
| 11  |                           | Վարորդ                   | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 102,000                |           |             | 102,000          |
| 12  |                           | Բանվոր                   | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 110,000                |           |             | 110,000          |
| 13  |                           | Հավաքարար                | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 59,523                 |           |             | 59,523           |
| 14  |                           | Հարկահավաք               | Տեխնիկական տնտեսական    | -                | 1                 | 80,000                 |           |             | 80,000           |
|     | Ընդամենը                  |                          |                         |                  | 14                | 1,391,046              |           |             | 1,391,046        |





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կարենիս, 60009, Karenis.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 25-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 5 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՇԱՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՐՍԵԼ

4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ

Համայնքի ղեկավար՝

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ





Հավելված Կարենիս  
համայնքի ավագանու  
2014 թ. դեկտեմբերի 24-  
ի N 25-Ն որոշման



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԿԱՐԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

### ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական զանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Արմեն Բաղդասարյան

(ԱճՈՆ, հայրանուն, ազգանուն)



**ՀԱՏՎԱԾ 1**  
**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ**

| Տողի<br>NN | Եկամտատեսակները                                                                                                                                                                                                                                                                  | Հոդվածի<br>NN | Ընդամենը<br>(ս.5+ս.6) | (հազար դրամով)<br>այդ թվում՝ |                 |
|------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|-----------------------|------------------------------|-----------------|
|            |                                                                                                                                                                                                                                                                                  |               |                       | վարչական<br>մաս              | ֆոնդային<br>մաս |
| 1          | 2                                                                                                                                                                                                                                                                                | 3             | 4                     | 5                            | 6               |
| 1000       | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ,<br/>այդ թվում՝</b>                                                                                                                                                                                                                                       |               | 24252.3               | 24252.3                      | 0.0             |
| 1100       | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                                 | 7100          | 6051.9                | 6051.9                       | X               |
| 1110       | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                  | 7131          | 4293.6                | 4293.6                       | X               |
| 1111       | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                               |               | 2053.7                | 2053.7                       | X               |
| 1112       | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար                                                                                                                                                                                                                    |               | 2239.9                | 2239.9                       | X               |
| 1120       | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                     | 7136          | 1698.3                | 1698.3                       | X               |
| 1121       | Գույքահարկ փոխադրամիջոցների համար                                                                                                                                                                                                                                                |               | 1698.3                | 1698.3                       | X               |
| 1130       | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝                                                                                                                                                                                      | 7145          | 60.0                  | 60.0                         | X               |
| 1131       | Տեղական տուրքեր, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                                      | 71452         | 60.0                  | 60.0                         | X               |
| 1132       | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար, որից՝                                                                                                                                                   |               | 30.0                  | 30.0                         | X               |
| 1133       | աա) Հիմնական շինությունների համար                                                                                                                                                                                                                                                |               | 0.0                   | 0.0                          | X               |
| 1134       | աբ) Ոչ հիմնական շինությունների համար                                                                                                                                                                                                                                             |               | 0.0                   |                              | X               |
| 1135       | բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար |               | 0.0                   |                              | X               |
| 1136       | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների բանդման թույլտվության համար                                                                                                                                                                 |               | 0.0                   |                              | X               |
| 1137       | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ համայնքի սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար                                                                                              |               | 30.0                  | 30.0                         | X               |
| 1138       | ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար                                                                                                                                                                                                           |               | 0.0                   |                              | X               |
| 1139       | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար                                                                                 |               | 0.0                   |                              | X               |
| 1140       | է) Համայնքի տարածքում առևտրի, համայնքի սննդի, զվարճանքի, շահույթով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար                                                                            |               | 0.0                   | 0.0                          | X               |
| 1141       | ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ռետանի կենդանիներ պահելու թույլտվության համար                                                                                                                                            |               | 0.0                   |                              | X               |
| 1142       | թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար                                                                                                                                                                                                              |               | 0.0                   |                              | X               |



| Տողի<br>NN | Եկամտատեսակները                                                                                                                                                                                                                                                       | Հոդվածի<br>NN | Ընդամենը<br>(ս.5+ս.6) | (հազար դրամով)<br>այդ թվում՝ |                 |
|------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|-----------------------|------------------------------|-----------------|
|            |                                                                                                                                                                                                                                                                       |               |                       | վարչական<br>մաս              | ֆոնդային<br>մաս |
| 1          | 2                                                                                                                                                                                                                                                                     | 3             | 4                     | 5                            | 6               |
| 1143       | ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար                                                                                                                                                                                           |               | 0.0                   |                              | X               |
| 1144       | ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար                                                                                                          |               | 0.0                   |                              | X               |
| 1145       | ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար                                                                                                                                                                                    |               | 0.0                   |                              | X               |
| 1150       | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝                                                                                                                                                                         | 7146          | 0.0                   | 0.0                          | X               |
| 1151       | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, այդ թվում՝                                                                                                                                                                                                                   |               | 0.0                   | 0.0                          | X               |
| 1152       | ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար               |               | 0.0                   |                              | X               |
| 1153       | բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար |               | 0.0                   |                              | X               |
| 1160       | 1.5 Այլ հարկային եկամուտներ, այդ թվում՝                                                                                                                                                                                                                               | 7161          | 0.0                   | 0.0                          | X               |
| 1161       | Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ, որից՝                                                                                                                                                          |               | 0.0                   | 0.0                          | X               |
| 1162       | ա) Եկամտահարկ                                                                                                                                                                                                                                                         |               | 0.0                   |                              | X               |
| 1163       | բ) Շահութահարկ                                                                                                                                                                                                                                                        |               | 0.0                   |                              | X               |
| 1164       | գ) Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ                                                                                                                                                              |               | 0.0                   |                              | X               |
| 1165       | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ                                          |               | 0.0                   |                              | X               |
| 1200       | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝                                                                                                                                                                                                                               | 7300          | 11630.1               | 11630.1                      | 0.0             |
| 1210       | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝                                                                                                                                                                                 | 7311          | 0.0                   | 0.0                          | X               |
| 1211       | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով                                                                                                   |               | 0.0                   |                              | X               |
| 1220       | 2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝                                                                                                                                                                                 | 7312          | 0.0                   | X                            | 0.0             |
| 1221       | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով                                                                                                   |               | 0.0                   | X                            |                 |
| 1230       | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝                                                                                                                                                                    | 7321          | 0.0                   | 0.0                          | X               |



| Տողի<br>NN | Եկամտատեսակները                                                                                                                                                 | Հոդվածի<br>NN | Ընդամենը<br>(ս.5+ս.6) | (հազար դրամով)<br>այդ թվում՝ |                 |
|------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|-----------------------|------------------------------|-----------------|
|            |                                                                                                                                                                 |               |                       | վարչական<br>մաս              | ֆոնդային<br>մաս |
| 1          | 2                                                                                                                                                               | 3             | 4                     | 5                            | 6               |
| 1231       | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով                   |               | 0.0                   |                              | X               |
| 1240       | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝                                                              | 7322          | 0.0                   | X                            | 0.0             |
| 1241       | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով                   |               | 0.0                   | X                            |                 |
| 1250       | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, որից՝                                                                        | 7331          | 11630.1               | 11630.1                      | X               |
| 1251       | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման նկատմամբ տրամադրվող դոտացիաներ                                                                                     |               | 11630.1               | 11630.1                      | X               |
| 1254       | բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ, այդ թվում՝                                                                            |               | 0.0                   | 0.0                          | X               |
| 1255       | բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ |               | 0.0                   |                              | X               |
| 1256       | բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ                                                                                       |               | 0.0                   |                              | X               |
| 1257       | գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)                                                               |               | 0.0                   |                              | X               |
| 1258       | դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝                                                |               | 0.0                   |                              | X               |
| 1259       | Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից                                                                     |               | 0.0                   |                              | X               |
| 1260       | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ թվում՝                                                                   | 7332          | 0.0                   | X                            | 0.0             |
| 1261       | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)                                                                       |               | 0.0                   | X                            |                 |
| 1262       | բ) Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝                                                              |               | 0.0                   | X                            |                 |
| 1263       | Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից                                                                     |               | 0.0                   | X                            |                 |
| 1300       | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝                                                                                                                                   | 7400          | 6570.3                | 6570.3                       | 0.0             |
| 1310       | 3.1 Տոկոսներ, այդ թվում՝                                                                                                                                        | 7411          | 0.0                   | X                            | 0.0             |
| 1311       | Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ                                                        |               | 0.0                   | X                            |                 |
| 1320       | 3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝                                                                                                                                    | 7412          | 0.0                   | 0.0                          | X               |
| 1321       | Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժիններ                                                           |               | 0.0                   |                              | X               |
| 1330       | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝                                                                                                             | 7415          | 5970.3                | 5970.3                       | X               |
| 1331       | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ                                                                                                            |               | 5970.3                | 5970.3                       | X               |



| Տողի<br>NN | Եկամտատեսակները                                                                                                                                                                                                                                                                                                               | Հոդվածի<br>NN | Ընդամենը<br>(u.5+u.6) | (հազար դրամով)       |                      |
|------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|-----------------------|----------------------|----------------------|
|            |                                                                                                                                                                                                                                                                                                                               |               |                       | այդ թվում՝           |                      |
| 1          | 2                                                                                                                                                                                                                                                                                                                             | 3             | 4                     | վարչական<br>մաս<br>5 | ֆոնդային<br>մաս<br>6 |
| 1332       | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ                                                                                                                                                                                                                                        |               | 0.0                   |                      | X                    |
| 1333       | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ                                                                                                                                                                                 |               | 0.0                   |                      | X                    |
| 1334       | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր                                                                                                                                                                                                                                                                                          |               | 0.0                   |                      | X                    |
| 1340       | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝                                                                                                                                                                                                                          | 7421          | 0.0                   | 0.0                  | X                    |
| 1341       | Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր                                                   |               | 0.0                   |                      | X                    |
| 1342       | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ                                                                                                                                                                  |               | 0.0                   |                      | X                    |
| 1343       | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ                                                                                                                                         |               | 0.0                   |                      |                      |
| 1350       | 3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                                                                           | 7422          | 600.0                 | 600.0                | X                    |
| 1351       | Տեղական վճարներ                                                                                                                                                                                                                                                                                                               |               | 600.0                 | 600.0                | X                    |
| 1352       | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ                                                                                                                                                                                                                            |               | 0.0                   |                      | X                    |
| 1360       | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից, այդ թվում՝                                                                                                                                                                                                                                                                               | 7431          | 0.0                   | 0.0                  | X                    |
| 1361       | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ                                                                                                                                                                                                   |               | 0.0                   |                      | X                    |
| 1362       | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից                                                                                                                                                                                                                |               | 0.0                   |                      | X                    |
